ՀԱՂՈՐԴՈՒՄ

«ՀՀ-ում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի «լվացման», ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2006թ. գործունեության մասին

Ներածություն

«ՀՀ-ում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի «լվացման», ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 2006 թվականի առաջին ինը ամիսների հիմնական խնդիրներն են հանդիսացել փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործունեության համակարգումը և Եվրոպայի խորհրդի Փողերի «լվացման» դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) կողմից 2007 թվականին նախատեսվող երրորդ փուլի գնահատման նախապատրաստումը:

Սույն հաղորդումը ներկայացնում է այն բոլոր հարցերը, որոնք Հանձնաժողովի կողմից կարևորվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացքում և որոնց լուծումը պահանջել է այդ գործընթացում ներգրավված բոլոր մարմինների ու հաստատությունների համատեղ աշխատանքը:

Հաղորդման շրջանակներում կներկայացվեն հետևյալ հարցերը. ա) Դիտարկվող ժամանակաշրջանում (2006թ. փետրվար ամսից մինչև օրս) Հանձնաժողովի կատարած աշխատանքները, բ) ՄԱՆԻՎԱԼ-ի առաջարկությունների ներդրման ընթացքը, գ) Հանձնաժողովի նոր խնդիրները և հետագա գործունեության ուղղությունները:

Դիտարկվող ժամանակաշրջանում Հանձնաժողովի կատարած աշխատանքները

Դիտարկվող ժամանակահատվածում Հանձնաժողովը գումարել է 5 նիստ: Հանձնաժողովի նիստերն ընթացել են նախապես կազմված օրակարգով և կոնկրետ փաստաթղթերի քննարկմամբ: Հանձնաժողովի նիստերն արձանագրվել են, իսկ որոշումները՝ քվեարկվել և հաստատվել Հանձնաժողովի անդամների կողմից:

Դիտարկվող ժամանակաշրջանում Հանձնաժողովի գործունեությունը ներկայացնելու համար ստորև բերվում է դրա ժամանակագրությունը.

ա. 2006թ. փետրվարի 28-ի նիստում Հանձնաժողովը հավանություն է տվել Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 18-րդ լիագումար նիստում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման միջոցառումների ժամանակացույցին: Այդ պարտավորությունները վերաբերում էին դեռևս 2004 թվականին ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից Հայաստանի Հանրապետության առաջին գնահատման զեկույցում տեղ գտած և չլուծված հարցերին: Քանի որ նշված հարցերը վերաբերում էին հիմնականում փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման հանցակազմերին և դրա հետ կապված օրենսդրական լրամշակումներ պահանջող քրեական ու քրեադատավարական մի շարք հարցադրումների, ուստի այդ աշխատանքների կատարման համակարգումը դրվել է ՀՀ դատախազության վրա:

ՄԱՆԻՎԱԼ-ի առաջարկությունների հիման վրա պատրաստվել է օրենսդրական լրամշակումների փաթեթ, նախապես համաձայնեցնելով ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության հետ: Միաժամանակ, Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնին հանձնարարվել է գրություն ուղարկել ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարություն՝ նշելով, որ իրականացվում են օրենսդրական լրամշակումներ, իսկ մի շարք հարցեր հաշվի կառնվեն դատաիրավական բարեփոխումների ընթացքում:

Նույն նիստում Հանձնաժողովին ներկայացվել են ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից ՀՀ երրորդ փուլի գնահատման ընթացակարգն ու պահանջները: Հանձնաժողովը որոշել է անդամ գերատեսչություններին ներկայացնել ՄԱՆԻՎԱԼ-ի փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների գնահատման երրորդ փուլի ընթացակարգի կանոնները:

Այդ որոշման հիման վրա կանոններն ու մեթոդաբանությունը թարգմանվել են հայերեն, տրամադրվել են գերատեսչություններին և դրանց ուղղությամբ կազմակերպվել են քննարկումներ, ինչպես նաև արվել են առաջարկություններ՝ ՄԱՆԻՎԱԼ-ի 2007 թվականի գնահատմանը նախապատրաստվելու համար:

Հանձնաժողովը քննարկել է Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ուսուցման ազգային ծրագրի հայեցակարգը, որը տրամադրվել է հանձնաժողովում ընդգրկված գերատեսչություններին՝ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար:

բ. 2006թ. մայիսի 3-ի նիստում Հանձնաժողովը քննարկել է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի ներկայացրած խորհրդատվությունների հիման վրա առաջարկվող օրենսդրական փոփոխությունները և որոշել է Հանձնաժողովի աշխատանքային խմբում շարունակել օրենսդրական մի քանի փոփոխությունների քննարկումները: Որոշվել է նաև այդ օրենսդրական փոփոխությունների տարբերակի վերաբերյալ եզրակացություն ստանալու համար այն ուղարկել Արժույթի միջազգային հիմնադրամ և ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարություն:

Հանձնաժողովի նիստում որոշվել է 2006թ. մայիսի 31-ից հունիսի 2-ը Սանկտ-Պետերբուրգում կայանալիք Փողերի լվացման դեմ պայքարի Եվրասիական խմբի լիագումար նիստում ներկայացնել Հայաստանի Հանրապետության՝ որպես դիտորդ անդամ, թեկնածության հարցը: Հարցի բարձրացումը լիագումար նիստում ունեցել է դրական արդյունք. Հայաստանի Հանրապետությունը դարձել է Եվրասիական խմբի դիտորդ անդամ (այս հարցի վերաբերյալ մանրամասները կներկայացվեն ստորև):

Այդ նիստում Հանձնաժողովը հաստատել է նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ուսուցման ազգային ծրագիրն ու դրա իրականացման ժամանակացույցը: Վերջինիս իրականացման համար գերատեսչություններին հանձնարարվել է ներկայացնել իրենց այն աշխատակիցների անունները, որոնք համակարգելու են ծրագրով սահմանված միջոցառումների կատարումը:

Հանձնաժողովը նաև որոշել է սկսել գերատեսչությունների միջև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում փոխըմբռնման երկկողմ համաձայնագրերի ստորագրման գործընթացը:

Արդյունքում՝ փոխըմբռնման երկկողմ համաձայնագրեր են կնքվել ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ դատախազության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, հարկային պետական ծառայության, մաքսային պետական կոմիտեի միջև:

Նիստի ընթացքում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացնել Եվրախորհրդի փորձագիտական եզրակացությանը:

Դրա արդյունքում Եվրախորհրդի փորձագետները ներկայացրել են օրենքի վերաբերյալ նախնական կարծիք, իսկ պաշտոնական կարծիքը կներկայացվի 2006թ-ի վերջում:

գ. 2006թ. հունիսի 21-ին կայացած Հանձնաժողովի նիստը հավանության է արժանացրել ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի և Կենտրոնական բանկի հետ համատեղ 2006 թվականի հունիսի 27-ին Երևանում կազմակերպվելիք փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի դասընթացի մասնակիցների ցանկը և օրակարգը (տե՛ս նաև «այլ աշխատանքներ» բաժնում):

Հանձնաժողովում քննարկման առարկա է դարձել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Եվրասիական խմբին Հայաստանի Հանրապետության՝ որպես դիտորդ անդամակցության վերաբերյալ հաղորդումը:

դ. 2006թ. հուլիսի 27-ին կայացած նիստում Հանձնաժողովը Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հերթական լիագումար նիստի վերաբերյալ հաղորդման քննարկման հիման վրա անհրաժեշտ է համարել ԱԳՆ հետ համատեղ սկսել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Ստրասբուրգի կոնվենցիայի լրամշակված տարբերակի վավերացման գործընթացը:

Հանձնաժողովը որոշել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում առկա բացերը լրացնելու համար ստեղծել իրավաբաններից կազմված աշխատանքային խումբ, որը աշխատելով Հայաստան ժամանող Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների հետ, կմշակի օրենքում փոփոխությունների և լրացումների համալիր նախագիծ:

Աշխատանքային խումբը, որն իր մեջ ընդգրկում էր տարբեր գերատեսչություններից հրավիրված մասնագետների, Արժույթի միջազգային հիմնադրամի հետ քննարկումներն իրականացրել է 2006թ. հուլիսի 31-ից օգոստոսի 8-ը, որի արդյունքում մշակվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների փաթեթը:

Հանձնաժողովը հավանություն է տվել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Եվրասիական խմբին կից գործող աշխատանքային խմբերի նիստերին ՀՀ դատախազության մասնակցությանը, իսկ 2006թ. օգոստոսի 27-ից 30-ը Ղրղստանում կայանալիք նիստերին ՀՀ մասնակցության ապահովման պարտականությունը ստանձնել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը :

Նիստի ընթացքում Հանձնաժողովն անդրադարձել է նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 13.1 հոդվածի հետ կապված՝ քրեական հետապնդման մարմիններին հաղորդում տրամադրելուց հետո Կենտրոնական բանկի կողմից լրացուցիչ այլ տեղեկատվության տրամադրման հնարավորության և իրավական հիմնավորվածության հարցին: Որոշվել է, որ լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը, ի լրումն հաղորդման, տեղի կունենա միայն Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ տվյալ գործարքը կասկածելի համարվելու դեպքում:

Ե. 2006թ. օգոստոսի 4-ի նիստում Հանձնաժողովը հավանության է արժանացրել Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների և աշխատանքային խմբի համատեղ աշխատանքի հիման վրա ներկայացված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակումների հիմնական սկզբունքներն ու մոտեցումները և հանձնարարել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնին ամփոփել այդ լրամշակումներն ու ներկայացնել օրենքում փոփոխությունների ու լրացումների մասին օրենսդրական նախագիծ:

Հանձնաժողովի իրականացրած այլ աշխատանքները

1. Հանձնաժողովին պարբերաբար ներկայացվել են Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի առջև ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացի վերաբերյալ հաղորդումներ, որոնց հետ կապված ծավալված քննարկումներում հստակեցվել ու համաձայնեցվել են այդ պարտավորությունների կատարման մեխանիզմները:

2. Հանձնաժողովն ապահովել է նաև տարբեր գերատեսչությունների ու հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությունը 2006 թվականի մայիս-հունիս ամիսներին Համաշխարհային բանկի կողմից անցկացված «ԱՊՀ երկրների ֆինանսական հետախուզության մարմինների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հեռակա ուսուցման դասընթացին»:

3. Հանձնաժողովն ակտիվ աջակցություն է ցուցաբերել ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից Հայաստանում իրականացվող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ուսուցման կարիքների բացահայտման ծրագրին: Այդ ծրագրի շրջանակում Հանձնաժողովը որոշել է 2006թ. հունիսի 6-ին և 7-ին կազմակերպվող աշխատանքային խորհրդակցության մասնակիցների ցանկը: Հանձնաժողովում ներկայացված գերատեսչությունների ներկայացուցիչները մասնակցել են նաև 2006թ. հունիսի 27-ին օտարերկրյա փորձագետների մասնակցությամբ կազմակերպված «ՀՀ պետական մարմիններում փողերի «լվացման» դեմ պայքարի հարցերի շուրջ իրազեկության ապահովումը» թեմայով սեմինարին:

ՄԱՆԻՎԱԼ-ի առջև ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը

Հաշվետու ժամանակահատվածում ՄԱՆԻՎԱԼ-ի պարտավորությունների ներդրման ուղղությամբ Հանձնաժողովի գործունեությունն իրականացվել է հետևյալ երկու ուղղություններով՝

1. 2004թ. կայացած ՄԱՆԻՎԱԼ-ի առաջին գնահատման զեկույցի հիման վրա ներկայացված պարտավորությունների ներդրման ապահովում:

Այդ ուղղությամբ դեռևս 2005թ. Հանձնաժողովի հավանությանն է արժանացել և ՄԱՆԻՎԱԼ-ին է ներկայացվել Հայաստանի վերաբերյալ Առաջընթացի հաշվետվությունը: Այդ հաշվետվության գնահատման արդյունքներով ՄԱՆԻՎԱԼ-ի լիագումար նիստում որոշվել է Հայաստանի նկատմամբ սահմանել համապատասխանության բարձրացման հատուկ ռեժիմ, որի շրջանակներում Հայաստանը պետք է մինչև 2006թ. նոյեմբերի 10-ը ներկայացնի դեռևս չկատարված պարտավորությունների մասով առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն: Այդ նպատակով ՀՀ դատախազության համակարգմամբ մշակվել և միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանն է արժանացել ՀՀ քրեական, քրեական դատավարության օրենսգրքերում, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ու լրացումների կատարման օրենսդրական փաթեթ: Այդ փաթեթում առաջարկվող լրամշակումները համաձայնեցվել են Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների և ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության հետ ու ամփոփվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Օրենսդրական փաթեթների ընդունման արդյունքում կճշգրտվեն և ՄԱՆԻՎԱԼ-ի պահանջներին կհամապատասխանեցվեն հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու հանցակազմի սահմանումը, նախնական միջոցներ կիրառելու և բռնագրավում տարածելու գործող ներքին համակարգը: Նախարարությունն արդեն այն ներկայացրել է ՀՀ կառավարությանը և վերջինիս օրենսդրական նախաձեռնության կարգով՝ ՀՀ Ազգային ժողովին: Ակնկալվում է, որ մինչև սահմանված ժամկետը՝ ս.թ. նոյեմբերի 10-ը Ազգային ժողովը քննության կառնի փաթեթը, որի վերաբերյալ Հայաստանը կներկայացնի իր Առաջընթացի հաշվետվությունը:

2. ՄԱՆԻՎԱԼ-ի երրորդ փուլի գնահատմանը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի համակարգի նախապատրաստում:

Քանի որ, ինչպես նշվել է, 2007 թվականին ակնկալվում է, որ ՄԱՆԻՎԱԼ-ի փորձագետները նոր մեթոդաբանությամբ կատարելու են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի համակարգի երրորդ փուլի գնահատում, ուստի դրա նախապատրաստումը եղել է Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Հանձնաժողովի անդամ գերատեսչություններին է ներկայացվել ՄԱՆԻՎԱԼ-ի գնահատման մեթոդաբանությունը, որի վերաբերյալ աշխատանքային խմբում կատարվել են տարբեր քննարկումներ: Այդ մեթոդաբանության հիման վրա իրականացվել են հետևյալ քայլերը՝

- Հանձնաժողովի համակարգմամբ և Արժույթի միջազգային հիմնադրամի օժանդակությամբ մշակվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության նախագիծը: Վերջինս արտացոլում է միջազգային այն հիմնարար ստանդարտները, որոնք գնահատվելու են ՄԱՆԻՎԱԼ-ի փորձագետների կողմից: Նախագիծը մշակելիս մասնավորապես հաշվի են առնվել Արժույթի միջազգային հիմնադրամի հետ իրականացված քննարկումների արդյունքները և միջազգային փորձը: Այդ նախագիծը նախատեսվում է լայն քննարկման ներկայացնել ինչպես Հանձնաժողովի անդամ գերատեսչություններին, այնպես էլ այլ շահագրգիռ գերատեսչություններին, որից հետո ներկայացնել ընդունման:
- Հանձնաժողովում նաև բազմիցս քննարկվել է հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ միասնական և հավասար պահանջների սահմանման խնդիրը: Այդ նպատակով մշակվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործող պահանջների և ընթացակարգերի մասին» կանոնակարգի նախագիծը, որը մանրամասնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ միջոցառումների իրականացման ընթացակարգերը և դրանց ապահովման եղանակները: Կանոնակարգը նպատակ ունի ապահովել բոլոր հաշվետու անձանց ներկայացվող պահանջների համալիր կարգավորումը, մանրամասնել օրենսդրական և միջազգային ստանդարտները՝ առավել կիրառելի դարձնելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մեխանիզմները: Կանոնակարգի ընդունմամբ կամբողջանա միջազգային ստանդարտների վրա հիմնված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրությունը: Այդ կանոնակարգի նախագիծն առաջարկությունների ու դիտողությունների համար ներկայացվել է միջգերատեսչական հանձնաժողովում ընդգրկված գերատեսչություններին ու հաշվետու կազմակերպություններին: Ակնկալվող առաջարկությունների հիման վրա նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ ու քննարկումներ, ամփոփել կանոնակարգի տեքստն ու Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատել այն:
- Հանձնաժողովի հանձնարարականի հիման վրա Ֆինանսական դիտարկումների կենտրոնը ՄԱՆԻՎԱԼ-ի գնահատման մեթոդաբանության հիման վրա սկսել է նախապատրաստել

Հայաստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ինքնագնահատման ծրագիր: Դրա հիման վրա նախատեսվում է մինչև գալիք գնահատումը հստակեցնել յուրաքանչյուր գերատեսչության խնդիրներն ու պատասխանատվության շրջանակը և հստակ ժամանակացույցով բարեփոխել դեռևս բաց մնացած խնդիրները:

Հանձնաժողովի նոր խնդիրները և հետագա գործունեության ուղղությունները

Հայաստանի Հանրապետությունը ներկայումս գտնվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի որակապես նոր համակարգի անցման շրջանում: Այդ շրջանի հիմնական խնդիրներն են հանդիսանում ձևավորված օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի շարունակական բարեփոխումը և ՓԼ/ԱՖ դեմ արդյունավետ պայքարի ուղղությամբ գործնական միջոցառումների ձեռնարկումը: Նշված միջոցառումները պետք է իրականացվեն տարբեր գերատեսչությունների համատեղ ջանքերով և համապատասխանեն միջազգային կազմակերպությունների առջև ստանձնած Հայաստանի Հանրապետության պարտավորություններին:

Այդ խնդիրների հիման վրա Հանձնաժողովն իր հետագա գործունեությունն իրականացնելու է հետևյալ ուղղություններով.

1. Հանձնաժողովը շարունակելու է համակարգել Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ներկայացվող պարտավորությունների ներդրման ընթացքը: Այդ կապակցությամբ Հանձնաժողովն ավարտելու է ՄԱՆԻՎԱԼ-ի առաջին փուլի գնահատման հաշվետվությամբ ներկայացված պարտավորությունների կատարումը և նախապատրաստվելու է երրորդ փուլի գնահատմանը (տե՛ս «ՄԱՆԻՎԱԼ-ի պարտավորությունների ներդրման ընթացքը» բաժնում):

2. Հանձնաժողովը կշարունակի իր ուշադրության կենտրոնում պահել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ուսուցման ազգային ծրագրի իրականացման հարցերը: Այդ առումով արդեն իսկ գնահատվել են յուրաքանչյուր գերատեսչության ուսուցման պահանջները, բացահայտվել են յուրաքանչյուր գերատեսչությունում ուսուցում անցկացնելու համար առկա ռեսուրսները, առանձնացվել են ուսուցման պատասխանատու աշխատակիցներ, որոնց հետ պետք է համակարգվեն հետագա աշխատանքները, միջազգային դոնորների հետ իրականացրած աշխատանքների արդյունքում ընտրվել է այն տարբերակը, որի մեխանիզմով պետք է իրականացվի ուսուցումը: Նախատեսվում է ուսուցանողներ պատրաստելու համար համապատասխան աշխատակիցների վերապատրաստում իրականացնել: Այդ առումով ներկայումս քայլեր են ձեռնարկվում յուրաքանչյուր գերատեսչության կողմից ուսուցման իրենց պահանջներին համապատասխան ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Հանձնաժողովը պետք է պարբերաբար քննարկի ու համաձայնեցնի այդ ծրագրերի շարունակական զարգացման խնդիրները:

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներից է հանդիսանալու նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի Հանրապետության օրենսդրության լրամշակումների քննարկումը և

անդամ գերատեսչությունների միջև համաձայնեցման ապահովումը: Այդ իմաստով, կարևորվելու է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության նախագծի միջգերատեսչական համաձայնեցումը և ընդունման ներկայացումը: Միջգերատեսչական հանձնաժողովում կքննարկվեն նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին վերաբերող այլ օրենսդրական փոփոխությունների, գերատեսչական ակտերի, ուղեցույցերի, տարբեր մեթոդական ակտերի նախագծեր:

4. Հանձնաժողովը քննարկելու է տարբեր միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, Համաշխարհային բանկ, ԵՀԶԿ, Եվրամիություն և այլն) կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը և Հայաստանի պարտավորությունները ու այդ հարցում համախմբելու է բոլոր անդամ գերատեսչությունների կարողությունները: Այդ առումով առավել կարևորվում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերին համապատասխան ահաբեկչության հետ կապված անձանց եկամուտների սառեցման մեխանիզմների ներդրումը, ՓԼ/ԱՖ դեմ Ստրասբուրգի նոր կոնվենցիայի վավերացումը և Եվրամիության դիրեկտիվներին ՀՀ օրենսդրության ներդաշնակեցումը:

5 Հանձնաժողովը շարունակաբար խթանելու է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում անդամ գերատեսչությունների համագործակցությունն ու տեղեկատվության փոխանակումը: Դա կատարվելու է ինչպես երկկողմ համաձայնագրերի հիման վրա, այնպես էլ առանձին խնդիրների ու գործառույթների լուծման նպատակով: Այդ կապակցությամբ սահմանվելու են համագործակցության հստակ սկզբունքներ ու կանոններ, որոնցով անդամ գերատեսչությունների համար հստակեցվելու են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համատեղ ծրագրերն ու խնդիրները: Հանձնաժողովը նաև պարբերաբար անդրադառնալու է այդ համագործակցության ընթացքում առաջ եկող խնդիրներին և դրանց հիման վրա ապահովելու է համագործակցության մեթոդաբանության զարգացումը:

6. Հանձնաժողովը պետք է ստանձնի նաև տարբեր մարմինների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացվող գործունեության գնահատման ու ամփոփման ֆունկցիա: Այդ նպատակով Հանձնաժողովը պետք է պարբերաբար մոնիտորինգ կատարի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տարբեր խնդիրների և գործառույթների կատարման նկատմամբ, գնահատի դրանց արդյունավետությունը և դրանից բխող առաջարկները հաստատի Հանձնաժողովի նիստերում: Հանձնաժողովի կարևոր խնդիրներից է հանդիսանում նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունքների վիճակագրության պարբերական ամփոփումը: